ուի մինչև եկեղեցւոյ դուռը, տաս քայլ նեղ փողոց մի է, այս միջոցին աջ որմին մէջ մի դուռ կը բացուի, այս տեղ կայ մի սենեակ, որ այժմ ուսուցիչարան է:

Դեռ ուսուցիչարանի դուռը չը հասած. մեր աջ որմին մէջ հիւսուած է մի խաչարձան, որ ունի 2 մեթրի չափ բարձրութիւն, մի մեթր լայնութիւն:

Այս խաչարձանիս ստորին թևը քանի խոնար իջնայ տակաւ առ տակաւ կ լայնանայ և ուր եռանկիւն մի կոփուած է, այս եռանկեան մէջ կայ արձանագրութիւն մի, որ ըստ եռանկեան ձևին տողերն հետզհետէ ընդարձակուած են և կայ այս արձանագրութիւնը:

«Ի թուականութեան հայոցս ՈԾԵ ին կանգնեցաւ Սուրբ Նշանս ի բարեխաւսութեան մարգարէից, որք ընթեռնուք, յիշեցէք ի Քրիստոս և Աստուած զձեզ յիշէ ժամանակ ամ՛։»

Դրսի դռնէն ներսի դուռը գնալիք նեղ փողոցին առաստաղին վերայ ամբողջապէս խաչ քարինք ծածկուած են, որք 20-էն աւելի կը լինին:

Եկեղեցւոյս ներսն ընդարձակ է և այժմեան ծածքը փայտեայ է. որմի չորս կարգ շարուած քարերն (հին որմն) մինչև որմի կէսն բարձրացուցած են որմերն, որոյ վերայ հաստատուած է երկրորդ նորոգութիւնն:

Աւազանին մերձ քարի մի վերայ փորագրուած է գառն մի, արծիւն վերան նստած, իւր ճիրաններու մէջ առած, որոյ մօտ խաչարձանի մի անկիւններն գրուած «Տէր»—«Աստուած» «Յիսուս»—«Քրիստոս»: Սորա տակը երկու տող գրութիւն, որ ճգնելով չը կարողացայ ընթեռնուլ միայն թուականը կարողացած եմ որոշել «ՌՄԻ» որ երկրորդ նորոգութիւնը լինելու է:

Խորանի դրսի երեսի լուսամուտի վերայ վերջին